ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1190-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 76-րդ, 77-րդ, 78-րդ և 80-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով՝ հիմք ընդունելով Փամբակ համայնքի հողամասը վարձակալության տրամադրելու մասին 02 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 17 արձանագրությունը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքում 02 սեպտեմբերի 2024 թվականին անցկացված վարձակալության մրցույթում հաղթող Արմեն Անդրանիկի Խառատյանին վարձակալությամբ 25 տարի ժամկետով տրամադրել լոտ 17. 06-070-0337-0004 ծածկագրով 0,118816 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս, մրցույթում առաջարկված առավելագույն գնով՝ տարեկան 5250 ՀՀ դրամով:

2.Արմեն Անդրանիկի Խառատյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

3.Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Արմեն Անդրանիկի Խառատյանի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ **Ս. ԱՆԱՆՅԱՆ**

04 հոկտեմբերի 2024
գ. Փամբակ